894/Ո

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ու Մ

«02» փետրվարի 2016 թ. N 125Ա

ք.Ստեփանակերտ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանակերտ քաղաքի Աշոտ Գրաշի փողոցում, Աշոտ Գրաշի 1-ին, 2-րդ, 3-րդ,4-րդ նրբանցքներում և Աշոտ Գրաշի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ փակուղիներում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորելու համար 2016 թվականի հունվարի 27-ին գրություն է ներկայացվել «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Մեսրոպյանի կողմից:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի N381 որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 53-րդ կետերով ու հաշվի առնելով «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունվարի 27-ի N14 գրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեփանակերտ քաղաքի Աշոտ Գրաշի փողոցում, Աշոտ Գրաշի 1-ին, 2-րդ, 3-րդ,4-րդ նրբանցքներում և Աշոտ Գրաշի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ փակուղիներում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ անշարժ գույքի հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանակերտի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարան՝ երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարումը հանձնարարել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման բաժնին:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ